ում, արուեստի եւ մտածումի լոյսերի մէջ կնքւում եւ ճամբայ ընկնում դէպի նոր արկածախնդրութիւններ:

Ի զուր չէ, որ դարաւոր թափառումներից յետոյ, այլափոխուած, չարչարուած, հեռաւոր դաշտերը մեր արիւնով կերակրելուց յետոյ, ահաւասիկ նորից վերադարձել ենք մայր հողի վրայ եւ ճակատագրական պայքար ենք մղում նոր մի էութեան համար:

Եւ ինչպի՜սի ժամանակ:

Դարը փչրել է իր ղեկը: Արեւմուտքը յառել է իր անհանգիստ աչքերը դէպի Արեւելք: Հիմքերը շարժուել են ու մեծ փլչումը սկսուել է: Այն, ինչ որ անուանում էինք քաղաքակրթութիւն, մարդկութեան անյաղթելի բերդ, այսօր՝ պարապ հոգիների առջեւ, ներկայանում է թղթէ տնակի նման:

Ամստերդամը նորանոր քաղաքամասերի մէջ կուտակում է իր աղբիւսները առանց ոճի, Կօրբիւզիէն վերաշինում է մեր խրճիթները Ֆրանսական անհարազատ հողի վրայ, Ամերիկան, իր կատաղած կեանքի անիւը տասնեակ յարկերի վրայ է ցցում ու պարապութեան մէջ ջղայնացած բազուկները շարժում:

Իսկ մենք վերադարձել ենք մերկ դաշտը, ուր Հոխխսիմէի եկեղեցին միշտ կանգուն է:

Այստեղ բոլոր ալիքները կանգ են առել, ծովը համր է եւ փոթորիկը հեռաւոր:

Եկել ենք որբացած եւ ոտաբոպիկ: Չկայ ուրիշ ժողովուրդ մեզանից աւելի չքաւոր եւ աւելի դժբախտ:

Բայց չկայ վայր աւելի լուսաւոր, աւելի ամբողջական եւ ոգեղինացած, քան այս դաշտը:

Այստեղ է նոր կեանքի բանալին:

Եւ այստեղ է մեր նոր առաքելութիւնը:

(Շարունակելի)

ՔԱՌԵԱԿՆԵՐ

I

Իմ շուրթերը նրկան են, երկու շաբար նրկան են՝
Զեղաւ մէկ օր ինձ լրսեն, այլոց շուրթին դէմ չառնեն.
Իմ աչքերը որսկան են, երկու կայտառ որսկան են՝
Զեղաւ մէկ օր ինձ լրսեն, այլոց հոգին խիստ չառնեն:

II

Մարդն աշխարհի նոյշ անօթն է, մայր բընութեան գուրգուրանքն է —
Նրբան ձեռ տալ կամ կոտրելը՝ ամենամեծ յանցանքն է.
Սիրտը մարմնի լուսոյ ջահն է, ծով-ծով սիրոյ սուրբ վանքն է —
Սիրտը կոտրել, մութ թողնելը՝ ամենամեծ յանցանքն է:

III

Այն գաւաթը, որի սրտի ջուրն ես խմում ամէն օր,
Կանթից բրռնած՝ պապակ սրտիդ հուրն ես մարում ամէն օր՝
Մի շուտ անցած, մի սէր չարած պատանի՜ է վաղամոռ,
Որ իր թեւը թեւիդ գրցած՝ շուրթրդ է ծրծում մեղրածոր:

IV

Շունչը պահած նոյշ աչիկ է այս ծաղիկը շուշանի,
Որին սիրած իր պատանին պատուիրել է սո՛ւս անի,
Թագչի այգում, անշարժ նըստի, իրա գալուն ըսպասի,
Ճերմակ հոդը դէմքին ֆաշի, իրա գալուն ըսպասի:

ՀԱՅՄԱՆ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան